50. ԱՆՄԱԽ ԱՇԽԱՐ

Թակավորըմ կէլնի, զինք ուր կնիկ, ունի մեյ խաւր որթի: Տղեն որ կէլնի մորեն, կտնեն ի'էօդեն, ուրենք էրնաւ հեչ չըն էլնի: Ինոր ատճև կարավաշըմ կէլնի: Ինոր խաց տարող-պիրողն էլ կէլնի, ուրիշ մարթ ինոր մուր չմտնի:

Ավուր մեկ օր մեչ կերակուրին ուսկոռ կէլնի. տղեն կթալի, տիպնի ջամուն, ջամ կկոտրի, շող կտիպնի ներս:

Տղեն կէլնի խեստ շողին գյուլաշ կառնի: Հըրթըփոց որ կէլնի, մեր կլսի, կէլնի սեյիսին կէօրեոխկի: Կասի. - Կընա խենքյ, էսա շահզատի հէօդիս ի՞նչ ծեն ի, կէլնի:

Սեյիս կէլնի կէրթաւ, կտիսնա որ տղեն շողին ի չափալամիշ կըլնի, տղեն մեչ քյընտընքյին էլեր էր լող, ըսկուն էր քյընտնի:

Սեյիս կասի. - Շահզադա՛, կայնի, տյու էն մարթու վըրեն չես կանա, ես կանամ:

Սեյիս կէրթաւ տյուս, պրտյում թուտթ կշրեշտի, կըպուցի վեր ծակին, կուգյա ներս:

Շահզադեն կասի. - Պիտի զիկ ասես, թե էսա ի՞նչ մարթ էր, տյու կառցար վերեն, ես չկառցա:

Կասի. - Շահզադա, տյուս արև կա, լյուս ի: Աշխարք կա:

Շահզադեն խեստ կլսի, տյուտ կքյակի, կըլնի տյուս:

Կտիսնա քիչըմ մարթ կէօլենված կէրթան, չորս խոգյի էլ փեստեր տըրած վեր թիվքըներաց պա մը գյեռ ի'ինե կտանեն:

Շահզադեն ուր սեյիսին կխառցնի, կասի - Էսա ի՞նչ ի:

Կասի. - Մարթ ի մեռե:

- Վո՞վ ի:
- Քո խոր սադրազամի լաճն ի:
- Մեռնելն ի՞նչ ի:
- Հ'ըմեն մարթն էլ պիտի մեռնեն:
- Ե՞ս էլ պիտի մեռնեմ:

- Խա, հըմենս էլ պիտի մեռնենք:

Տըղեն կերթա՝ տուն, կասի. - Մարե՛, զի պատրաստություն տիսի, ես կերթամ անմախ աշխարհ:

Կասի. - Որդի՛, մենքյ ծերացեր ենքյ, տյուն ես մեր զավակ, ի՞նչըխ կերթաս:

- Չէ, - կասի. - ես կերթամ:

Կայ պարեով կանի, կերթա:

Շատ քիչ կերթա, տաշտի մը մեչ մեյ թաքյ ծառ կա: Կռիկըմ թառի վեր ծառին:

Լաճ կնստի են ծառի տակ, խով տեղ:

Կռիկ կկանչի, կասի. - Ա՜յ տըղա, դեռ՞ր կերթաս:

Կասի. - Կերթամ անմախ աշխար:

Կասի. - Անմախ աշխար որ կա՝ մո զիկ ի:

Կասի. - Ինչը՞խ մո քյե յի:

Կասի. - Եփոր ծոտիցի, իմ ծեռտ խասավ իմ ոռին, են օր ես կմեռնեմ:

Տղեն կասի. - Որ ախըրի մեռնել կա մո քյե, ես կերթամ, չեմ մնա մո քյե:

Կերթա: Շատ քիչ կերթա, կտիսնա տաշտըմ կա, խոտ էլե մեկ մարթու բոյով, մեկ խատ եզ կա ինե՝ մեկ ատմեն:

Կնստի մո եզ, կըռհաթի:

Կասի. - Կտրիճ, ո՞ր տեղ կերթաս:

Կասի. - Կերթամ անմախ աշխար:

Կասի. - Ա՜յ ջըհել, անմախ աշխար որ կա, մո զիկ ի:

Կասի. - Ինչը՞խ մո քյե յի:

Կասի. - Խա, եփ էսա տաշտ կերա լմնցա՝ ես նոր կմեռնեմ:

Կասի. - Ախըր պիտի տյու մեռնես, ես մո քյե չեմ տադրի, կերթամ:

Կայ պարեով կանի, կերթա:

Շատ քիչ կերթա, կտիսնա մեչ տաշտիմ գյետըմ կուգյա: Մեյ խատ խալիվորըմ նստե էտա գյետի պերան:

- Պարեով քյե, խալիվոր:

- Աստծու պարին, ո՞ր տեղ կերթաս, ջըհե՛լ:

Կասի. - Կերթամ անմախ աշխար:

- Խորո ջըհել, անմախ աշխար որ կա՝ մո զիկ ի:

- Ինչը՞խ մո քյե յի:

- Էսա չայի կոդրուկ կտել կտիսնա՞ս: Եփ որ էսա գյետ էսա չայի կտելով թալիցի՝ են օր նոր ես կմեռնեմ:

- Եփ որ տյու կմեռնես, ես էսա տեղեն կերթամ:

Կայ պարեով կանի, կթոնի կերթա:

Շատ քիչ կերթա, կխասնի անմախութնի սխպըրի վերեն: Ծեռքյեր կլվա, կնստի են տեղ:

Շատ քիչ կմնա են տեղ. ին խարիր տարի կմնա էնտեղ:

Էն մեկ օր կմտածի, կասի. «Վա՜խ, ես էսա էլավ քյանի օր ի իկեր եմ էսա տեղ. մկա իմ խեր, մեր զի կաչկեն, ես ընչի՞ չիմ էրթա»:

Առատուն քյնուչ կէլնի վեր, կվլացվի, իրեքյ խատ խընձեոր կքյաղի կտնի ծոց, կթոնի կուգյա:

Էն գյախ քանի որ չէր լըվացվե, ծերունի խալիվոր մ'էր. ինչ լըվացվավ խընձեորներն իդիր ուր ծոց, էլավ տրսնընխինգյ տարեկան տղղե մը:

Կուգյա՜՜, կխասնի մո' խալիվոր պապիկ:

Կասի. - Պարեով քյե՛, խալիվոր պապիկ:

Կասի. - Պարեով էկա՜ր, խազար պարեով, ծաքյիկ:

Կասի. - Ի՞նչխ ես, պապիկ:

Կասի. - Էսա մեյ կտելն ի մնացե, էն էլ խե թալեմ՝ կմեռնեմ:

Կասի. - Թա՛լ էն մեկ կտելն էլ, համան մեռի:

Խեր թալելուն՝ կընի պընտղունցըմ խոդ:

Էն տեղեն թոդնի կուգյա:

Շա՜տ քիչ կուգյա, կուգյա մո եզ:

Կասի. - Պարեվ քյե:

- Ասդծու պարին:

Կասի. - Ինչը՞խ ես:

Կասի. - Էտա մեյ կանաչն ի մնացե, եփ որ կընտրեմ, կմեռնեմ:

Կասի. - Տնաշեն, տե՛ էն մեկն էլ կընտրի, ի՞նչ ի պոնչէր կաչկես:

Կընտրելուն պես՝ կէլնի պտղունցըմ խոդ:

Կընի կուգյա մո' կռիկ:

Կասի. - Պարեվ քյե, կռիկ ախպեր:

Պարեվ կառնի:

Կասի. - Ինչը՞խ ես:

Կասի. - Էսա մեկ ծեռտն ի մնացե, էսա իրեքյ օր չեմ ծռտե, խեր ծռտեմ՝ կմեռնեմ:

- Տնաշեն, տե էն մեյն էլ ծռտի, մեռի:

Կռիկ կծռտի, խե ծռտելուն կմեռնի:

Շատ քիչ կուգյա, կխասնի ուր խոր քյաղաքյ: Կտիսնա որ ուր խոր քեռշկ-սարեն ի, աման տյուտ փռխվեր ի:

Կէլնի կէրթա մո թակավոր:

Կասի. - Թակա՛վոր ապրած, էսա քեռշկ-սարեն իմ խոր քեռշկ-սարեն ի:

Կասի. - Խորո ջընեե՛լ, տյու վի՞ր լաճն ես:

Կասի. - Ես Արշակ թակավորի լաճն եմ:

Կասի. - Տնա՛շեն, Արշակ թակավոր ին խարիր տարի ի մեռե:

- Ինչը՞խ ին խարիր տարի ի մեռե: Ես ընցած շափթյուն կնացի, էսա շափթյուն էկա, էլավ ին խարիր տարի՞:

- Որ ընկուն ի, - կասի, - մեյ խատ պառավ կա քյո խոր ժամանակով. կնա մոտ էն պառավ, քյո խոր սալախ էն կուտա:

Տղեն կըլնի կէրթա մո՝ պառավ:

Պառավ կասի. - Որտի՛, քյո խեր ուր ժամանակով տարին մեյ խատ եզ կառներ, կտաներ տաշտ, կմորթեր, փուրչա-փուրչա կաներ, կբլավեր խավքերայ: Ինոր ժամ-պատարաք խավքերայ խամար էր: Ժողովրդին չէր անե: Տյու էլ պիտի էրթաա ըսկուն անես. որ չանես՝ քյո խոր թակավորութեն չըս կանա ասոնե: Կէլնես կէրթաս եզըմ կառնես կտանես տաշտ մորթես, կպրտես, կրլավես, կմտնես մեչ ինոր կողաշարքի ուսկըռներայ: Խավքյեր որ կուգյան, ինոնց մեչ կա սինամախավքյ, չլուտ ի: Մեյ փառ մենակ կա ինոր թիվի վերեն: Էրկու խատ խավքյ մտած ինոր թիվի տակ, կպիրեն էն տեղ, կուգյա թառի վեր էն կողաշարքի ուսկըռին, էն կպատմի՝ տյու կլսես:

Էն գյախ լաճ կէլնի եզ կտանի տաշտ. կմորթի, կբլավի, զինքյ կնստի մեչ կողաշարքի ուսկըռին: Կտիսնա տեսակ-տեսակ խավքյեր կուգյան, մեչկըներն էլ սինամխավքյ, էրկու խավքյ գյեն մտած թիվքերուսծ տակ, կառնեն կպիրեն: Սինամախավքյ կթառի վեր էն ուսկըռին: Միսրն կուտեն կպոծընեն, էրթալու գյախ սինամախուսվքյ ուր մոտի խավքերայ կասի. - Կիտե՛ք, ես ծե ասա մ՝ասեմ: Թայլա Արշակ թակավրու լաճն էսա տեղն էլներ, լըսեր, էրթեր ուր խոր թակավորական սարեն առներ:

Խավքյեր կասեն. - Դե՛, ասա որ էրթանքյ:

Կասի. - Ես որ պատմեմ, թըռնեմ, մեյ փառ կա իմ թե՝ կինի: Արշակ թակավրու սարի տյուռ ատոթըրնին ի: Ինոր գյուռ էրթա մարթ պիրի, փեստրտով քսկի, յոթ գյուգյում ոսկի կա ինոր տռան շիմքաւն տաակ, էն տռան նշանակ էն յոթ գյուգյում ոսկին ի: Ես կիտեմ, էն քյասկելով չկանաս կընդընի, թո իմ թիվի փառ որ կինի, քյաշկե կնիկ ըստա էլներ, առներ տաներ, ատոթըրնին տանի, ինոր տյուռն էլ ատոթրասն թարաֆն ի, տաներ կըսեր վերեն, տյուռ կպանվեր: Տյուռ որ ասանվի, յոթ գյուգյում ոսկին կէլնի տյուս, Արշակ թակավորի անունն էլ վեր էն յոթ գյուգյումին գյրուկ ի:

Խասվքյ կթոնի, փառ կինի:

Տըղեն կառնի փառ, կուգյաս: Պիրի ատոթըրնին կտանի տյուռ կպանուս: Պանանյուն պես, ոսկին էլ կըլնի տյուս: Արշակ թակասվրու անուն էլ վեր էն գյուգյում ոսկուն գրյուկ ի:

Էն գյախ նոր թակասվոր կասկխի, կուգյա: Կասի. - Էտա ի՞նչ պան էր, արիր:

Կասի. - Ես իմ խոր սարեն կառնեմ, էսա իմ խոր սարեն ի, որ չըս ավատա, ահա իմ խոր անուն վեր գյուգյումին գյրուկ ի:

Թակավոր կկանչի ուր յազչին կսիրի: Կուտա կարտալ էտա գյիրըն, ինչ վեր գյուգյումին ի:

Կկարտա, կիմնա, կասի. - Խա՛, էսա Արշակ թակավրու սարեն ի, էս էլ ինոր շահզադեն ի, որ կընանցեր էր անմախ աշխար: Գեոսկեռ անունն էլ վերեն գյրյուկ ի:

Թասկավոր կասի. - Որ ըսկուն ի, շահզադա, ծեն մը խանե, ես իմ

աղչիյ կուտամ քյե, տյու էլի թակավոր, ես կըլնեմ քյո առճե սեյիս:

Պիտի կարքի, ուր ախչիկ կուտա շահզադին: Փեսեն կանի թակավոր, ինքյ կըլնի սեյիս:

Խարսնիս պըոծնելուն պես ժամանակըմ կընըցնի: Շահզադեն կասի. - Կնին, ես քյո խեր-մեր պիտի կանչեմ դավաթ:

Կերակուլ կիտի կնիկ, պատրաստութեն կտիսնա, կէրթա կպիրի ուր զոքանչ, ուր աներ: Կուտեն, կխմեն, շահզադեն ուր ծոցեն խընձեորըմ կխանի, կուտա աներոչ: Ինք կըլնի ճեռչ դեխ մարթ, մեկել ծոցեն կխանի, կուտա զեոքընչին, կըլնի սիվտակ մուրուս խալիվորըմ: Մեյն էլ կուտա կընգյուն: Տալուն պես կըլնի մեյ ճանգյ խոդ:

Էրկունց իրեք խընձեոր էճավ: